

ՀՈԼՈՎՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵՁՎԱԲԱՆԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ

Ա.Ս.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հոլովի ուսումնասիրության և ճիշտ լուսաբանության համար ամենից սուղ պահանջվում է նկատի ունենալ, թե այն ինչպիսի քերականական կարգ է, դրա միջոցով ինչ է արտահայտում և ընդհանրապես ինչպիսի համակարգ է ներկայացնում տարբեր լեզուներում:

Պետք է ասել, որ լեզվաբանական գիտությունը հիմնականում հենց այդ տեսանկյունից է քննել ու լուսաբանել Հոլովները, միանգամայն տեղին ու իրավացիորեն նշել, որ «Հոլովը անվան քերականական կարգ է, որի կարգային քերականական իրույթները (граммембы) արտահայտում են տվյալ անվամբ նշվող հարաբերությունը այլ բառերով նշվող առարկաների կամ երևույթների նկատմամբ...», Հոլովը «Անվան քերականական այն կարգն է, որը արտահայտում է նրանով նշվող առարկայի հարաբերությունը իրականության այլ առարկաների, հատկանիշների կամ եղելությունների (գործողությունների, վիճակների) նկատմամբ...», «Հոլովը անվան ձև է, որը արտահայտում է նրա հարաբերությունը խոսքում այլ բառերի նկատմամբ», և կամ «Գոյական անվան Հոլովական ձևերով արտացոլվում է նյութական, իրական աշխարհի առարկաների, երևույթների, գործողությունների և հատկանիշների միջև եղած կապերի ըմբռնումը», «...Հոլովը այնպիսի քերականական կարգ է, որը ներկայացնում է վերջավորության և քերականական այն իմաստների համատեղման միասնությունը, որոնք արտահայտում են գոյական անվան հարաբերությունը այլ գոյականի կամ գոյականի հարաբերությունը բայի նկատմամբ», «...երկակիությունը (իմա՝ անվանողական և շարահյուսական - Ա.Մ.) բնորոշ է նաև գոյականների Հոլովի կարգի համար: Հոլովն ունի անվանողական արժեք (указность), այն կապակցվելով նրանով կառավարվող բառույթների հետ՝ որոշում է մի առարկայի և այլ առարկաների, գործողությունների կամ եղելությունների միջև եղած հարաբերությունների բնույթը», «Հոլովի կարգը անվան (գոյականի, դերանուն-գոյականի և թվականի) բառափոխական կարգն է, որը արտահայտվում է իրար հակադիր մի շարք այնպիսի ձևերի համակարգում, որոնք ցույց են տալիս անվան հարաբերությունը մի այլ բառի (բանաձևի) նկատմամբ՝ բառակապակցության կամ նախադասության կազմում»¹ և այլն:

Այս և նման շատ այլ բնութագրումներ պարզորոշ ցույց են տալիս, որ լեզվաբանները Հոլովը արտաքին աշխարհի առարկաների, երևույթների, իրողությունների միջև եղած բազմազան կապերն ու հարաբերությունները

¹ Большая советская энциклопедия, т. 19, М., 1975, с. 73.

² О. С. Ахманова, Словарь лингвистических терминов, М., 1969, с. 305.

³ В. В. Виноградов, Русский язык, М., 1972, с. 159.

⁴ Р. А. Будагов, Очерки по языкознанию, М., 1953, с. 168.

⁵ И. Г. Милославский, Морфологические категории современного русского языка, М., 1981, с. 69.

⁶ Краткая русская грамматика, М., 1989, с. 161.

արտացոլող քերականական կարգ են համարել և այն որոշել հիմնականում Հենց այդ հիմունքով: Գտնելով, որ «Հոլովը, իբրև ձևաբանական կարգ, կապված է առարկաների և երևույթների միջև եղած հարաբերությունների արտահայտման հետ», նրանք առաջնությունը տվել են Հոլովով դասի նշանակությանը, բայց չեն անտեսել նաև ձևը, Հոլովը ձևի և բովանդակության սերտ միասնություն են դիտել, քանիցս նշել ու շեշտել են, որ ինչպես ամեն մի, այնպես էլ Հոլովի «քերականական կարգը կարգային (կատեգորիալ) նշանակության և քերականական ձևերի միասնություն է»⁷, որ «Քերականական կարգերը ամենից առաջ՝ լեզվի (բառերի, նրանց իմաստակիր մասերի, նրանց կապակցությունների) քերականական ընդհանրությունները նշող տարրերի միասնություններ են», որ «Քերականական կարգը որոշակի իմաստի և նրա արտահայտման՝ լեզվում գոյություն ունեցող ձևաբանական միջոցների միասնություն է», «Քերականական կարգը քերականական նշանակության (իմաստի) և քերականական ձևի միասնություն է»⁸ և այլն:

Այսպիսով, լեզվաբանական գիտությունը Հոլովի քերականական կարգի ոչ միայն նշանակության կամ բովանդակության, այլև ձևի հարցն է ճշտորեն լուսաբանել և բնորոշել յուրաքանչյուրի դերն ու արժեքը նրա համակարգում:

Հայտնի լեզվաբան Ա.Ա.Ռեֆորմատսկին, օրինակ, զբաղվելով քերականական իմաստի և քերականական ձևի կապի ու հարաբերության հարցի քննությամբ՝ Հոլովի որոշման համար ինչքան նրա նշանակությունը, այնքան էլ ձևն է հական ու կարևոր համարել և նախ նշել, որ «Քերականության առավել դժվար հարցը քերականական ձևի հարցն է», «Ձևը լեզվում և, մասնավորապես, քերականության մեջ հատուկ հասկացություն է, որը նաև հատուկ սահմանում է պահանջում»⁹, և ապա՝ այն տեսակետն է հայտնել, որ «1. Ձևը քերականության լինել նշանակությանը: 3. Ձևը քերականության մեջ քերականական իմաստի և քերականական միջոցի հարաբերությունն է՝ նրանց միասնությամբ», որ «...«քերականական ձև» (կամ քերականական ձևեր) և քերականական կարգ (կամ քերականական կարգեր) տերմինները չպետք է շփոթել: Քերականական ձևը կապված է արտահայտության միջոցի հետ. այն քերականական իմաստի (նշանակության) և այդ իմաստի արտահայտության քերականական միջոցի հարաբերությունն է՝ նրանց միասնությամբ»¹⁰:

Ավելացնենք, որ այդ նույնն է հավաստում նաև Հայազգի լեզվաբան Ռ.Ա.Բուդազովը՝ ասելով. «Հոլովը, իբրև քերականական կարգ, ներկայացնում է իմաստի և դրա արտահայտման ձևի բարդ միասնություն»¹¹:

Այսպիսով Հոլովը իմաստի ու ձևի սերտ միասնություն դիտելով և բացահայտելով ինչպես մեկի, այնպես էլ մյուսի էությունը, դերն ու նշանակությունը՝ լեզվաբանական գիտությունը այդ հիմամբ կարողացել է

⁷ Н. Г. Милославский, *Уч. зап.*, էջ 75:

⁸ Ю. С. Степанов, *Основы общего языкознания*, М., 1975, с. 144.

⁹ А. А. Реформатский, *Введение в языковедение*, М., 1967, с. 254.

¹⁰ Ф. М. Березин, Б. Н. Головин, *Общее языкознание*, М., 1979, с. 183.

¹¹ В. И. Кодухов, *Введение в языкознание*, М., 1979, с. 208.

¹² А. А. Реформатский, *Уч. зап.*, էջ 255:

¹³ Նույն տեղում, էջ 256:

¹⁴ Նույն տեղում, էջ 260:

¹⁵ Նույն տեղում, էջ 318:

¹⁶ Р. А. Будагов, *Уч. зап.*, էջ 168:

ապացուցել, որ բոլոր դեպքերում էլ, որ Հոլովներն իրենց արտաքին հնչյունական կազմով կամ արտաքին ձևով տարբերվում են, քան Հոլովներ (ինչպես, օրինակ, ռուսերենում), որոնք թեև ձևով նման են կամ համընկնում են, բայց տարբեր տեսակի հարաբերություններ են արտահայտում և հետևաբար՝ նաև տարբեր ու առանձին Հոլովներ են: Իսկ դա ինքնին վառ ապացույց է այն բանի, որ ձևով նման, բայց տարբեր կարգի հարաբերություններ արտահայտող հոլովաձևերը ոչ թե նույն, այլ տարբեր բառաձևեր են (формы слов), և սովոր դեպքում մենք գործ ունենք քերականական համամասնության հետ երևույթ, որ նույնպես արձանագրված ու պարզաբանված ենք տեսնում լեզվաբանական գրականության մեջ: Այսպես՝ Օս.Ախմանովան «Համանունությունը» (Омонимия, իսպ. Homonymia) երկու կամ ավելի տարբեր լեզվական միավորների հնչյունական համընկնում (совпадение) է համարում և նշում, որ կա «Հնչյունային համանունություն» (омонимия звуковая), վերջավորությունների համանունություն (омонимия окончаний), հոլովական ձևերի համամասնություն (омонимия падежных форм - ընդծումը մերն է - Ա. Մ.), դարձվածների համանունություն (омонимия фразеологизмов), մասնակի համանունություն (омонимия частичная)»¹⁷: Հոլովական ձևերի համանունության համար նա վիճարկում է ռուսերենը՝ նշելով, որ այդտեղ «Հոլովվող բառերի որոշ խմբերում» համանունական ձևեր են «անշունչ գոյականների արական սեռի եզակի թվի ուղղական-հայցականը»¹⁸, «չնչավոր գոյականների սեռական հոգնակի ձևերը» համընկնում են հայցականի ձևերի հետ՝ «человека, брата, вола, дочерей»¹⁹: Ռուսերենի Հոլովների համանունությունը փաստել ու կարևորել է նաև նշանավոր լեզվաբան Վ. Վ. Վինոգրադովը: Ձևով համընկնող Հոլովաձևերը տարբեր Հոլովներ համարելով՝ նա միաժամանակ գոյական անունների Հոլովման մեջ համանունության զարգացման ընթացքն է պատկերել ասելով. «Հոլովական ձևերի վառ արտահայտված համանունությունը կամ համաձևայնացությունը (омоморфемность) (հմտ. космн սեռ., տր., և ուղղ., հայց., հոգն. հմտ. пуги, организация և այլն) վկայում է վերջավորությունների գերի թուլացման և նախածանցնախդիրների աճի մասին: Համաձևայնացությունը ամենից քիչ հենարան է գտնում արական սեռի, հատկապես կոշտ Հոլովման ձևերում...: Համանունության ուղիով շատ ավելի հեռու են գնացել Հոլովումների թույլ տիպերը (իգական սեռի փափուկ բաղաձայնով վերջացող բառերը և ուղղական Հոլովում գրո վերջավորությամբ՝ ж, ш-ով բառերը. маты и доны բառերը. -мя-ով վերջացող չեզոք սեռի բառերը և пуги բառը)»²⁰:

Հոլովական համանունությունը անդրադարձել և այն ավելի լայնորեն է լուսաբանել լեզվաբան Յու.Ստեպանովը իր «Հոլովների դասակարգման խնդիրը (դասակարգումների համատեղումը և նրա հետևանքները)» հոդվածում՝ համառոտակի ընդթափանցելով Ռ.Յակոբսոնի և Ե.Կուրյուպինի՝ Հոլովների դասակարգմանը վերաբերող հակադիր տեսակետները: Նա նույնաձև Հոլովները ոչ միայն նույնպես քերականական համանուններ է համարել, այլև նրանց

¹⁷ О. С. Ахманова, նշվ. աշխ., էջ 287:

¹⁸ Նույն տեղում, էջ 306:

¹⁹ Նույն տեղում, էջ 307:

²⁰ В. В. Виноградов, նշվ. աշխ., էջ 147:

ընդլայնել և ուղղել գտնելով, որ, օրինակ, ռուսերենում կան երեք կարգի համանունություններ: 1) «Ուղղականը և հայցականը համընկնման դեպքում, - գրում է Յու. Ստեպանովը, - հանդես են գալիս համանունության հարաբերություններով...»: Դա լիակատար համանունություն (ПОЛНАЯ ОМОНОУМНОСТЬ) է (стол, рюкзак, халат, шляпа, армяк и т.д.) կամ առաջին «կարգի համանունություն»²¹: 2) «Մի կողմից տրականի, նախդրավոր հոլովի և մյուս կողմից սեռականի միջև կարող են նույնպես համընկնումներ լինել եղակի թվում (армян, пекут), որոնք համանունություն են, բայց երկրորդ կարգի»²², 3) «Մի կողմից հայցականի և մյուս կողմից տրականի, նախդրավոր հոլովի միջև կարող է լինել նաև երրորդ կարգի՝ ավելի թույլ, միայն թեքություն համանունություն՝ ружье, халат, и т.д. сестра-младшая, брат, и т.д. сестра, армян, и т.д.»²³:

Դրանցից բացի, Յու. Ստեպանովը գտնում է, որ «գոյություն ունի նաև առավելագույն թույլ, հեղհեղուկ, բայց, այնուամենայնիվ, ռուսաց լեզվի համար բավական ընդունված հեռավոր կարգի համանունություն. СТОЛОМ գործ., եղ. թիվ, արակ. սեռ-СТОЛОМ ուղղ., եղ. թիվ, արակ. սեռ, ЗАЛОМ գործ., եղ. թիվ, արակ. սեռ, ЗАЛОМ ուղղ., եղ. թիվ, արակ. սեռ, ЗЕХИՄ ուղղ., եղ. թիվ, արակ. սեռ-АРМАН սեռ, հոգն. թիվ, իգ. սեռ և այլն»²⁴:

Այսպիսով, ներկայացնելով ռուսերենի տարբեր հոլովների համընկնումները կամ նման հոլովաձևերը՝ Յու. Ստեպանովը միաժամանակ ցույց է տալիս, թե նրանք հոլովական համանունության ինչպիսի շարքեր են կազմում և ինչ կողմերով կամ առանձնահատկություններով են հատկանշվում. ընդ որում՝ նա համանունության հատուկ տիպ է համարում հոլովների ձևաբանական համընկնումները և դրանք ներկայացնելով իբրև «անհամաչափ կամ ցատկոտ երևացող համանունություն (асимметричною или зеркальною омонимией)» գտնում, որ այն «թափանցում է քերականության ողջ ոլորտը» և իր նշանակությամբ «լեզվաբանի առջև այնքան որոշակի է պատկերանում, որքան լայն է այդ տեսակետից համեմատվող կարգերի շրջանակը», որ այն «հնարավորություն է ընձեռում ճշտելու համանունության ընդհանուր հասկացությունը քերականության մեջ»²⁵:

Ռուսերենի հոլովների համանունությունն իր պարզ ու հիմնավոր մեկնությունն է գտել նաև "Русская грамматика" գրքում: Այստեղ ևս, միանգամայն ճշտորեն, հոլովի անվան մի այնպիսի բառափոխական կարգ է դիտվում, «որն արտահայտվում է ձևերի՝ իրար հակադրվող շարքերի համակարգում և ցույց է տալիս անվան հարաբերությունը մի այլ բառի (բառաձևի) նկատմամբ. բառակապակցության կամ նախադասության կազմում»: Այն ձևի և իմաստի միասնությունը կազմող այնպիսի լեզվական միավոր է դիտվում, որն իր արտահայտություններով մի ամբողջական համակարգ է կազմում. թե ռուսաց լեզվի հոլովական հարացույցներն ու դրանց տեսակներն են՝ նշվում, թե հոլովների արտահայտած հիմնական ու

²¹ Ю. С. Степанов, Проблема классификации падежей (Вопросы языкознания, 1968, №6, с. 40).

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում, էջ 43:

²⁶ Русская грамматика, т. 1, М., 1982, с. 474-475.

երկրորդական իմաստները կամ նշանակություններն են ներկայացվում և թե ձևով նման Հոլովներն են պարզաբանվում և դրանք իրավացիորեն քերականական համանուններ համարվում:

Եվ իրոք, նույն այդ դրքում ռուսերենի Հոլովների ձևավորման գործում ոչ միայն Հոլովական թեքությունների (ֆլեքսիաների) դերն է կարևորվում, այլև նրանց իրական պատկերն է տրվում և ուղղակի նշվում, որ «գոյականների Հոլովական հարացույցներից ոչ մեկը բաղկացած չէ նյութապես (материально) վեց (ըստ Հոլովների թվի) տարբեր ձևերից. առաջին և երկրորդ Հոլովումների հարացույցները՝ եզակի թվում, և թուր Հոլովումների հարացույցները՝ հոգնակի թվում, ուստի հինգ տարբեր ձևեր, երրորդ հոլովումն հարացույցն էլ եզակի թվում ունի միայն երեք (ընդգծումը մերն է - Ա. Մ.) տարբեր ձևեր»²⁷, որ «Հարացույցներից յուրաքանչյուրի կազմում կան համանունային հոլովական թեքություններով ձևեր (ընդգծումը մերն է - Ա. Մ.). օրինակ՝ նյութապես համընկնում են ուղղ. և Հայց. կամ սեռ. և Հայց. Հոլովների թեքությունները արական սեռի առաջին Հոլովման եզակի թվի և հոգնակի թվի թուր Հոլովումների հարացույցներում, սեռ., տր. և նախորդ. Հոլովների թեքությունները՝ եզակի թվի երկրորդ Հոլովման հարացույցում», որ «թեքությունները համանունային կարող են լինել տարբեր հարացույցներում»²⁸:

Այս ամենից էլ, բնականաբար, այն ճիշտ հետևությունն է արվում, որ «երեք Հոլովումների թուր Հոլովական ձևերը ընդհանուր առմամբ միայն տասնհինգ տարբեր ձևեր ունեն»²⁹, իրողություն, որ իր հերթին ու մի անգամ ևս ցույց է տալիս ու հաստատում, որ նման Հոլովաձևերը ոչ թե նույն, այլ միանգամայն տարբեր բառաձևեր են և, իբրև այդպիսիք, առանձնակի տեղ են թանում անվան Հոլովական համակարգում և հարացույցներում:

Մասնաշեղծ Հոլովական համանունության զանազան արտահայտությունները ռուսերենում ռուսագետ լեզվաբանները միաժամանակ, դրա հետ կապված, ցույց են տվել, որ Հոլովական տարբեր ձևեր էլ կան, որոնք նույն նշանակությունը կամ հարաբերությունն են արտահայտում և, բնականաբար, ոչ թե համանուններ, այլ հոմանիշներ են: Այսպես՝ Հենց ինքը՝ Թուստեպանովը, ձևով նման ուղղականն ու Հայցականը լիակատար կամ առաջին փարգի համանունություն է համարում. «Ինչ վերաբերում է տրականին՝ և նախորդավոր (իմա՝ ներգոյական - Ա. Մ.) Հոլովին, - դրում է նա, - (գործիականը ռուսերենում երեք ձևերի համընկնման հարաբերությունների մեջ չի մտնում), ապա նրանց համընկնման դեպքում հոմանշություն է առկայանում (имеют место случаи): Տարբեր իմքերի Հոլովների միջև եղած հարաբերությունները էապես այլ են, հոմանշության հարաբերությունները, այսինքն՝ միանշանակ գործառնությունների (ֆունկցիաների) համընկնումները այստեղ չեն կարող տեղ ունենալ»³¹:

Ուշադրվ է և նա, որ Թուստեպանովը Հոլովական հոմանշությունը լեզվական բավական հին իրողություն է համարում և նաև նշում, որ «Հոլովների հոմանշությունը նախադրվոր կապակցություններում, ներառյալ Հայցականը,

²⁷ Նույն տեղում, էջ 475:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Նույն տեղում:

³¹ Ю. С. Степанов, նշվ. աշխ., էջ 40:

լայնորեն զարգանում է ուսաց ազգային և ավելի ուշ՝ գրական լեզվի կազմավորման հետ մեկտեղ՝ նոր ժամանակում»³²։ Եվ, այնուհանդերձ, հոլովների քերականական հոմանշությունը, որ, ասենք, առավել մեծ կարևորություն է ներկայացնում հայերենի հոլովների ու հոլովական համակարգի ճիշտ լուսաբանման համար, ուսագետ լեզվաբանները առանձնակի քննության նյութ չեն դարձրել՝ չգլխավոր, անշուշտ, դրա կարիքն ու անհրաժեշտությունը։ Հակառակ դրան, նրանք շատ լրջորեն են զբաղվել «լեզվի համակարգայնության խնդրով և հստակորեն պարզաբանել քերականական բազմազան իրողությունների սերտ կապերն ու փոխհարաբերությունները և, ի թիվս դրանց, նաև հոլովների համակարգը՝ իր համապատասխան հարացույցով»։

Լեզվաբանական գիտությունը այդ տեսակետից մեծազույն ծառայություն է մատուցել հատկապես ընդհանուր լեզվաբանության խոշոր մասնագետ Ա.Ա.Ռեֆորմատսկին՝ նշելով. «Լեզվի համակարգայնությունը (сущностность) ոչ թե լեզվական իրականությունների (материалов) պարզ արտաքին ձևավորման, այլ այն բանի մեջ է, որ լեզվի կառուցվածքի բոլոր միանման տարրերը փոխկապակցված են ե իրենց նշանակությունը ստանում են միայն իբրև ամբողջի հակադիր մասեր (ընդգծումը մերն է - Ա.Մ.)»³³։

Ուղենշային նույն այս տեսական դրույթից ելնելով՝ նա գտնում է, որ «քերականության համար այդ հատկանիշը առանձնապես կարևոր է. այնպես որ կարելի է խոսել սեռի կամ հոլովի մասին միայն այն դեպքում, երբ, թերևս, կա երկու հակադրվող սեռ կամ հոլով տվյալ լեզվում։ Իսկ եթե այդպիսի հակադրություն չկա, և գոյություն ունի միայն մի ձև (ինչպես՝ սեռի համար անգլերենում և թուրքական լեզուներում, կամ հոլովի համար՝ ֆրանսերենում), ապա տվյալ կարգն ընդհանրապես չկա լեզվում»³⁴։

Սա, անշուշտ, միանգամայն ճիշտ տեսակետ է, որ արտահայտված ենք տեսնում. նաև այլ լեզվաբանների աշխատություններում. օրինակ՝ Ի.Գ.Միլոսլավսկին ևս հավաստում է, որ «չկան դեպքեր, որ առարկաները օբյեկտիվ իրականության այլ երևույթների հետ ինչ-որ կապերի ու հարաբերությունների մեջ չգտնվեն, ինչպես նաև չկան գոյականների բառաձևեր, որոնք նախադասության մեջ այլ բառաձևերի հետ այս կամ այն հարաբերության մեջ չգտնվեն»³⁵, և կամ՝ «Ինքնին, տարազատ հոլովական ձևը չի կարող հարաբերության որևէ կոնկրետ նշանակություն արտահայտել»³⁶։

Իրողությունը ճիշտ նույն կերպ է մեկնաբանել նաև Յու.Ստեպանովը՝ պարզ ու որոշակի ասելով, թե լեզվում ամեն ինչի «գոյության հիմնական սկզբունքը հակադրության սկզբունքն է. որևէ բան լեզվում գոյություն ունի միայն այն չափով, ինչ չափով հակադրվում է մի այլ բանի, որ կապված է նրա հետ, բայց տարբեր է նրանից (ընդգծումը մերն է - Ա.Մ.)»³⁷։

Այսպիսով՝ իրար հակադիր, բայց նաև իրար հետ սերտորեն կապված իրողությունները իրենց արտահայտություններով կամ բառաձևերով համապատասխան հարացույցներ են կազմում ներկայացնելով ամբողջի և մասի սերտ միասնություն։ Ի պատիվ դարձյալ ուսա լեզվաբանների, պետք է ասել, որ

³² Նույն տեղում, էջ 48։

³³ А. А. Реформатский, *Уч.* 1949, էջ 249։

³⁴ Նույն տեղում, էջ 249-250։

³⁵ И. Г. Милославский, *Уч.* 1949, էջ 70։

³⁶ Նույն տեղում, էջ 71։

³⁷ Ю. С. Степанов, *Основы общего языкознания*, с. 144.

նրանք ճշտորեն են պարզաբանել նաև Հոլովական Հարացույցի էությունը և ցույց տվել, թե նրա անդամները ինչ Հարաբերություններ են արտահայտում, ինչով են կապվում իրար հետ և մի ամբողջություն կազմում:

Ի.Գ.Միլոսլավսկին, օրինակ, Հոլովների ձևաբանական նշանակությունների բնույթի ըմբռնման կարևոր սկզբունքներից առաջինը այն է համարել, որը «Հենվում է Հոլովական բառաձևերի Հարացույցային Հարաբերությունների վրա»: Մի ուրիշը՝ Վ.Ի.Կոդլովսույը, իր հերթին գտնելով, որ «Հարացույցային Հարաբերությունները այն Հարաբերություններն են, որոնք լեզվի միավորները խմբերի, շարքերի, կարգերի մեջ են առնում» և որոնց վրա էլ «Հենվում են, օրինակ, բաղաձայնների համակարգը, Հոլովման համակարգը, Հոմանշային շարքը»³⁹, միաժամանակ նշել է, որ «Քերականական կարգի Հարացույցի ինչպես ձևային կառուցվածքը Համահավասար չէ բառաձևերի քանակին, այնպես էլ նրա իմաստային կառուցվածքը Համահավասար չէ տվյալ կարգի բառաձևերով արտահայտվող նշանակությունների ամբողջ ծավալին», և ըստ այդմ էլ՝ Հոլովական Հարացույցի բաղադրիչների բազմիմաստությունը բացատրել նրանով, որ «բառաձևը, իբրև լեզվի միավոր, կապված է ոչ միայն քերականական կարգի Հարացույցի, այլև բառի բառույթային և նրա շարահյուսական գործառնության հետ»⁴⁰:

Հոլովական Հարացույցը դիտելով իբրև Հակադրության իրար հետ կապված բառաձևերի մի ամբողջություն՝ ուսաազետ լեզվաբանները ճշտորեն են որոշել Հոլովների բնույթը, արժեքն ու կշիռը Հոլովական Հարացույցում և նաև իրավացիորեն նշել, որ կան երկու կարգի՝ Ուղիղ (прямой) և Թեք (косой, косвенный) Հոլովներ, որոնք փոխադարձաբար կապվում և համալրում են իրար: Ինքնին Հասկանալի է, որ ուղիղ է կոչվում ուղղականը, իսկ թեք՝ մյուս Հոլովները, որոնց տարբերությունն էլ հական հատկանիշ են համարել լեզվաբանները և Հոլովական համակարգի մասին ճիշտ գաղափար կազմելու համար բազմիցս նշել, որ «Ուղղական Հոլովը առարկաների անվանման Հոլովն է (այն կոչվում է ուղիղ Հոլով, իսկ մնացած՝ տրական, ներգոյական և այլն Հոլովները՝ թեք)»⁴¹, ուղղականը «Հոլովի կարգային (категориальная) ձև է, ցույց է տալիս գործող առարկան» կամ անձը և, որը, իբրև «ուղիղ» Հոլով, Հարկադրվում է Հոլովների մնացած կարգային ձևերին իբրև «թեք» Հոլովների...»⁴², «Ուղղականը (...) իբրև «սկզբնական» Հոլով, կոչվում է ознѣт—ուղիղ, ի տարբերություն մյուսների, որոնք թեքվում են, Հոլովվում են, ուստի և նրանք համարվում են թեք («косвенн, косвенный» Հոլովներ»⁴³, «Ուղղական Հոլովը կոչվում է ուղիղ, իսկ մնացածները՝ թեք... այն անվան մեջ, որ սովորաբար համընկնում է ուղղական Հոլովին, արտացոլվում է առանձին առարկաների համեմատաբար ինքնուրույն էությունը, իսկ թեք Հոլովներում բացահայտվում են առարկաների և հասկացությունների Հարաբերությունները այլ առարկաների և հասկացությունների, գործողության, եղելության, իրականության իսկ նկատմամբ»⁴⁴, «Ձևերի այդ համակարգում ուղղական

³⁹ И. Г. Милославский, *նշվ. աշխ.*, էջ 80:

³⁹ И. Кодухов, *նշվ. աշխ.*, էջ 106:

⁴⁰ Նույն տեղում, էջ 281:

⁴¹ Большая советская энциклопедия, т. 19, с. 73.

⁴² О. И. Ахманова, *նշվ. աշխ.*, էջ 171:

⁴³ В. В. Виноградов, *նշվ. աշխ.*, էջ 141:

⁴⁴ Р. А. Будагов, *նշվ. աշխ.*, էջ 173-174:

Հոլովը երակետային ձևն է, մյուս բոլոր Հոլովները ոչ երակետային (այսպես կոչված թեք Հոլովներ են)»⁴⁵ և այլն:

Այսպիսով, մի շարք լեզվաբաններ մի կողմից եթե ուղիղ Հոլովի՝ ուղղականի և թեք Հոլովների, ապա մյուս կողմից հենց վերջիններին միջև եղած կապերն ու հարաբերություններն են ճշտորեն որոշել և նշել, որ, օրինակ, Հայցականը կախյալին այնպիսի Հոլովաձև է, «որը ցույց է տալիս այն առարկան, որ անմիջականորեն ենթարկվում է բայական ստորոգյալով արտահայտվող գործողությանը կամ, ավելի լայն, ընդհանրապես այն առարկան, որը այդ գործողության տերը կամ սուբյեկտը է»⁴⁶, «Հայցական Հոլովը ցույց է տալիս, որ բայական հատկանիշը ընդլայնում է իր գործողությունը ամբողջապես նրանից կախված հիմքի վրա (на основании от него существительного)»⁴⁷, «սեռականը Հոլովի կարգի ձև է՝ պատկանելության, կապի, վերաբերության և այլն նշանակություններով»⁴⁸ և այլն:

Սրանք փաստեր են, որոնք ցույց են տալիս, որ լեզվաբանական գիտությունը հիմք ընդունելով Հոլովների՝ արտահայտած հիմնական նշանակությունները՝ ոչ միայն նրանց փոխադարձ կապերն ու հարաբերությունները, այլև առանձնահատկությունները, ընդհանրություններն ու տարբերություններն է պարզաբանել և իրավացիորեն՝ նշել, որ կան «երկու Հիմնական խմբի՝ անվանակից և բայակից Հոլովներ», որոնք և նույն այդ Հանդամանքով պայմանավորված իրարից տարբերվում են որոշակի հատկանիշներով:

Ի.Գ.Միրոսլավսկին, օրինակ, վկայաբերելով Ռ.Օ.Յակոբսոնին, որ Հոլովների հարացույցային նշանակությունների համար երեք իմաստային հատկանիշ է նշել՝ ուղղվածությունը (направленность), ծավալայնությունը (объёмность), և ծայրաբևեռայնությունը (периферийность), փաստում է, որ՝ ա) «Ուղղվածության» հատկանիշը իր վառ արտահայտությունն է գտնում ուղղական և Հայցական Հոլովների հակադրության մեջ: Հայցական Հոլովը միշտ ցույց է տալիս, որ դեպի առարկան է ուղղված գործողությունը», «Սեռական Հոլովին իսկ խորթ է ուղղվածության իմաստը: Տրականը, ինչպես և Հայցականը, գործածվում է իբրև ուղևորման Հոլով (как направленные падеж)»⁴⁹:

բ) «Մյուս հատկանիշը՝ «ծավալայնությունը», ավելի ցայտուն է արտահայտված (ներկայացված) սեռականի հանդեպ ուղղական և Հայցական Հոլովների հակադրությամբ»⁵⁰:

գ) Ռ.Օ.Յակոբսոնի ըմբռնմամբ՝ «ծայրաբևեռային Հոլովն էլ տեղեկություն է տալիս ասույթի երկու կետերի գոյության մասին: Բայց ոչ միայն այդ մասին: Հայցականը ուղղվածության շնորհիվ ևս տեղեկություն է տալիս երկու ասույթի կետերի առկայության մասին: Դեռ ավելին. Հայցականը հաղորդում է տալիս ուղղականի նկատմամբ իր ստորադաս գերի մասին»⁵¹:

Հոլովի քերականական կարգի գիտական լուսաբանության համար պակաս կարևոր չէ նաև Ի.Միրոսլավսկու այն տեսակետը, թե՛

⁴⁵ Краткая русская грамматика, с. 181.

⁴⁶ О. С. Ахманова, նշվ. աշխ., էջ 176:

⁴⁷ А. А. Шахматов, Синтаксис русского языка, Л.: 1925, с. 307-308.

⁴⁸ О. С. Ахманова, նշվ. աշխ., էջ 390:

⁴⁹ И. Г. Милославский, նշվ. աշխ., էջ 80:

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ Նույն տեղում:

ա) «Սուբյեկտային (իմա՝ գործողի – Ա.Մ.) իմաստ կարող են ունենալ բոլոր Հոլովները՝ բացի նախդրայինից (իմա՝ ներգոյականից – Ա.Մ.): Հոլովի ձևը այդ դեպքում կախված է ստորադաս բառից, Հոլովի սուբյեկտային իմաստը պայմանավորված է տվյալ դեպքում նրա եզակիությամբ (единичности)»⁵²:

բ) «Գործողության օբյեկտի (առարկայի) իմաստը նույնպես կարող է արտահայտվել բոլոր Հոլովներով, բացի նախդրայինից: Տվյալ դեպքում Հնարավոր երեք Հոլովների ժամանակ առաջ է դալիս կամ սուբյեկտի (գործող անձի) և ուղղակի ու անուղղակի օբյեկտների (սեռական և տրական, Հայցական և տրական), կամ սուբյեկտ-օբյեկտի և գործողության միջոցի (սեռական և գործիական, Հայցական և գործիական) Հակադրություն»⁵³:

գ) «Միաժամանակ չորս Հոլովների գործածության դեպքում Հակադրվում են օբյեկտը, սուբյեկտը, Հասցեատերը և գործողության միջոցը (адресат и способ действия)»⁵⁴: Այս և նման փաստերը ևս ցույց են տալիս, որ Հոլովի քերականական կարգը իրոք գիտական պատշաճ մակարդակով է քննության առնվել ինչպես ռուսական, այնպես էլ ընդհանուր լեզվաբանական գրականության մեջ, և իրականում չկա Հոլովներին վերաբերող որևէ Հարց, որ արծարծված կամ լուսաբանված չլինի այնտեղ: Եվ Հետևաբար՝ մի այնպիսի կարևոր Հարց, ինչպիսին Հոլովների թվի կամ քանակի Հարցն է, որ հակառակ նշանակություն ունի Հոլովական Համակարգի բնութագրման Համար, չէր կարող դուրս մնալ և դուրս չի մնացել, իհարկե, շատ լեզվաբանների ուշադրությունից ու տեսադաշտից, և նրանք ձգտել են ճշտորեն լուսաբանել նաև դա: Առաջ գնալով, սակայն, պետք է ասել, որ այն Հարցերին, թե ի՞նչով է որոշվում Հոլովների թիվը, ինչո՞ւ դա տարբեր է տարբեր լեզուներում, ինչո՞ւ որոշ լեզուներ Հոլովներ չունեն և այլն, բոլորը չէ, որ միանման կամ միանշանակ պատասխան են տվել:

Ա.Ի.Սոբոլևսկին, օրինակ, չընդունելով Հոլովների որոշման Համար որևէ որոշակի կամ միասնական Հիմունք, երկմտաբար է արտահայտվել այդ մասին և այն տեսակետն է Հայտնել, թե «Քանի՞սն են Հոլովները: Այդ Հարցի պատասխանը ոչ միայն դժվար է, այլև ուղղակի Հնարավոր չէ: Եթե Հիմք ընդունենք անվան Հնչյունական ձևը..., մենք պետք է ասենք, որ որոշ անուններ... ունեն քիչ Հոլովներ, քան ուրիշներ..., և որ Հոլովների թիվը անորոշ է: Իսկ եթե Հիմք ընդունենք քերականական նշանակությունը, մենք ստիպված պետք է լինենք մեծ քանակով Հոլովներ ճանաչել...: Այդ դեպքում, օրինակ, хлеб ձևը տարբեր նախադասություններում (Я вижу хлеб; Мясо лучше хлеба; Мясо лучше – своего хлеба) պետք է ներկայացնի 3 Հոլով partitivus, ablativus, possessivus»⁵⁵:

Հակառակ դրան, այն լեզվաբանները, որոնք անվան «Հնչյունական ձևը» և «քերականական նշանակությունը» չեն գտել իրարից և Հիմք՝ են ընդունել Հոլովների արտահայտած Հարաբերությունը, Հիմնականում ճիշտ են որոշել նաև նրանց թիվը կամ քանակը:

Նույն այդ Հիմունքով առաջնորդվելով՝ ռուսագետ լեզվաբանները ձևով ինչպես տարբեր, այնպես էլ նման Հոլովաձևերը տարբերակել և ռուսերենի

⁵² Նույն տեղում, էջ 89:

⁵³ Նույն տեղում:

⁵⁴ Նույն տեղում, էջ 89-90:

⁵⁵ В. В. Виноградов, *Уч. зап.*, էջ 141:

Հոլովները ընդհանրապես 6-ն են համարել, ինչը շատ պարզորոշ նշել է, օրինակ, Ա.Ն.Գլոզդևը՝ ասելով. «Համընդհանուր է ուսերենում 6- Հոլովի (ուղղական, սեռական, տրական, հայցական, գործիական, նախդրային) ճանաչումը: Բայց գոյականների ոչ մի շարք չունի վեց տարրեր ձևեր: Մի գոյականը ամենաշատը ունենում է հինգ փոփոխություն: Օրինակ՝ стена (պատ) բառը զանազանում է ուղղ. стена, սեռ. стены, տր. ու նախդր. стене, հայց. стену, գործ. стеной. Стол (սեղան) բառը ունի ընդհանուր ձև՝ ուղղ. և հայց. стол և տարբերում է սեռ. стола, տր. столу, գործ., столом, նախդր. о столе: Վեց Հոլովը հաստատվում է գոյականների տարբեր խմբերի համադրմամբ: Այսպես՝ ուղղականը և հայցականը, որ չեն տարբերվում стол տիպի բառերի դեպքում, տարբերվում են стена տիպի բառերի դեպքում (Հմտ. Кабинет и библиотека открыты и Открыли кабинет и библиотеку). այդպես և՛ տրականը, և՛ նախդրավորը համընկնելով стена տիպի բառերի դեպքում՝ տարբերվում են стол տիպի բառերում (Кабинету и библиотеке нужна новая литература и В кабинете и библиотеке выставлена новая литература)⁵⁶: Հոլովները որոշելով անվան փոփոխված ձևով արտահայտվող հարաբերությունը՝ լեզվաբանները միաժամանակ նկատել են, որ նրանցից բացի կան նաև ձևաբանական այլ միջոցներ, որոնցով արտաբերվող աշխարհի առարկաների, երևույթների, իրողությունների միջև եղած կապերն ու հարաբերությունները տարբեր լեզուներում տարբեր կերպ են արտահայտվում: Իրողությունը այդպես է մեկնաբանել օրինակ, Ռ.Ա.Բուզադովը: «Տարբեր լեզուներում Հոլովների թիվը տարբեր է: Ռուսերենում նրանք վեցն են (եթե չհաշվենք նաև կոչականը և հին տեղի Հոլովը), գերմաներենում չորսն են, իսկ Դադստանի շատ լեզուներում նրանք նշանակալից չափով ավելին են», - գրում է նա⁵⁷:

Տարբեր լեզուների Հոլովական իրավիճակը, սակայն, շատ ավելի հանգամանորեն է ներկայացրել Հր. Աճառյանը. նա մի շարք լեզուների Հոլովների ոչ միայն թիվը կամ քանակը, այլև նրանց պատմական զարգացումն է ցույց տվել և իրեն հատուկ պարզ լեզվով մատնանշել, որ «Ամեն տեղ Հոլովումը հետագա զարգացման արդյունք է: Այս բանը Հայտնի կերպով երևում է ուղղո-ֆիննական լեզվախմբի մեջ. Հունգարերենը թեև ունի 21 Հոլով, բայց նրանք չկան իր ցեղակից մյուս լեզուների մեջ. այսպես՝ ֆիններենը ունի միայն 16 Հոլով, էստոներենը՝ 11, և լատվերենը՝ միայն 8, վոգուլերենը՝ 6 Հոլով»⁵⁸. և կամ «Հին պարսկերենում էլ եզ. սեռ. և տր. խառնվեցին իրար և վերածվեցին միայն սեռականի: Նմանապես բաց. և գործ. Հոլովները խառնվեցին հին պարսկերենում, որով Հնդեվրոպականի 8 Հոլովները իջան 6-ի»⁵⁹, «Նոր Հունարենը ավելի առաջ գնաց և ջնջեց նաև տրականը՝ տեղը դնելով Հյց. ες, προς «ի, առ» նախդիրներով. լատիներենը պահում է եզակիում 6 Հոլով (այն է՝ ուղղ., կոչ., սեռ., տր., Հյց., բաց.), բայց երբեմն 5, Հոգնակիում 4 ձև, չեզոքների մեջ՝ 3 ձև»⁶⁰, «Ամենից ավելի պահպանողական են սանսկրիտը և զենդը, որոնք անփոփոխ են պահում միշտ այն Հոլովական վիճակը (8 Հոլով), որ ունեն նախալեզուն: Սանսկրիտի հաջորդներից հինդուստանին այսօր էլ պահում է

⁵⁶ А.Н.Гвоздев, Современный русский литературный язык, М., 1967, с. 163-164.

⁵⁷ Р.А.Бугагов, նշվ. աշխ., էջ 174:

⁵⁸ Հր.Աճառյան, Լիակատար քերականություն Հայոց լեզվի, Հ. 3, Ե., 1957, էջ 356:

⁵⁹ Նույն տեղում, էջ 374:

⁶⁰ Նույն տեղում, էջ 375:

նույն 8 Հոլովները: Սրանցից փոքր չափով միայն պակաս են բայթիկ-սլավոնական լեզուները, որոնք ունեն 7 Հոլով (դեռ թ դարում): Զնշված է միայն բացառականը: Այսօր էլ ուսերենը և չեխերենը ունեն ուղղ., սեռ., տր., Հյց., ներգ. և գործ. Հոլովները: Լիթվերենը ունի ուղղ., սեռ., տր., Հյց., ներգ. և երբեմն կոչ.: Բուլղարերենը եզակիում գիտե միայն ուղղ., կոչ. և Հյց., մյուս Հոլովները ջնշված են, իսկ հոգնակիում բոլոր Հոլովները միաձև են, իսկ Մակեդոնիայի բուլղարական բարբառը ամբողջապես ջնշել է Հոլովները, ինչպես իրանական ճյուղի մեջ պարսկերենն ու քրդերենը⁶¹: Ի լուր Հայերենի սեռականն ու Հայցականը մերժողների, հարկ է նշել, որ բազմազան լեզուների Հոլովների մեծ դիտակ Հր. Աճառյանի Հաստատմամբ «Հայերենը պատկանում է այն լեզուների շարքին, որոնք խստիվ Հապավում են բառի վերջաձևնը. այս նկատառումով սպասելի էր, որ Հայերենի մեջ էլ Հոլովների թիվը մեծ չափով կրճատվեր: Բայց զարմանալի է, որ այդպես եղած չէ: Հնդեվրոպական ցախալեզվի 8 հոլովներից հայերենում ջնշված է միայն մեկը, այն է՝ կոչականը. մյուս հոլովները ուղղ., Հյց., սեռ., տր., բց., գործ. և նույնիսկ ներգոյականը, թեկուզ զանազան նոր ձևերի տակ, շարունակում են իրենց գոյությունը հնից ՄԻՆՉԵՎ ԱՅՍՕՐ (ընդգծումը իմն է - Ա.Մ.)»⁶²:

Այս բոլորն էլ վկայում ու ցույց են տալիս, որ արտաքին աշխարհի բազմազան առարկաների, երևույթների, իրողությունների միջև դրսևորվող բազմազան կապերն ու Հարաբերությունները տարբեր լեզուներում իրո՞ք տարբեր ձևաբանական միջոցներով, տարբեր քանակի Հոլովներով և նաև առանց Հոլովների են արտահայտվում: Վերջիններիս պակասն էլ, ինչպես Հայտնի է, ծածկում կամ նրանց փոխարեն՝ կիրառվում են կապերը (նախդիրներ, նախադրություններ և ետադրություններ), որ նույնպես չեն անտեսել Հոլովների մասին խոսող լեզվաբանները և քանիցս նշել են, որ, օրինակ, «Ե՛վ անգլերենում, և՛ բուլղարերենում, և՛ բոլոր ֆրանսիական լեզուներում, որոնցում գոյականն ըստ Հոլովների սովորաբար չի փոփոխվում, նախադասության բառերի կապը իրացվում է այլ միջոցներով՝ բառերի դասավորությամբ, ինչպես անգլերեն հետևյալ ասույթում *Ann sees Pete* կամ նախդիրներով (ինչպես՝ բուլղարերեն *на видя* օրինակում): Բայց այդ Հարաբերությունները, որ իրենց Հնարավորություններով իրահավասար են Հոլովական Հարաբերություններին, դրանցից տարբերվում են իրենց արտահայտության ձևով»⁶³, «...ընդհանուր Հոլովների թիվը (ըստ առանձին լեզուների) տատանվում է երեքից մինչև 52-ի: Դա՞ կապված է սպասարկու բառերի՝ հետադրությունների հարցի հետ, որոնք իրենց Հնչյունական տեսքով և քերականական ձևավորմամբ շատ նման են Հոլովական թեքություններին (на падежыне флекции)⁶⁴, «Նախդիրները կատարում են այնպիսի ձևակազմավորական դեր, ինչպիսին՝ թեքությունը (флекция) Հոլովական ձևի կազմում: Օրինակ՝ անգլերենի *the book of a student* (ուսանողի գիրքը) կապակցության մեջ *of* նախդիրը իրացնում է երկու գոյականների միջև եղած կապը, երկրորդը ենթարկվում է առաջինին, դրանք, իբրև որոշյալ և որոշիչ, կապում իրար՝ արտահայտելով Հատկանշային Հարաբերություններ»⁶⁵, «Բոլոր թեք Հոլովները կարող են գործածվել ինչպես առանց նախդիրների, այնպես էլ

⁶¹ Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 376:

⁶² Նույն տեղում:

⁶³ P. A. Будагов, նշվ. աշխ., էջ 168:

⁶⁴ A. A. Реформатский, նշվ. աշխ., էջ 498:

⁶⁵ B. И. Кодухов, նշվ. աշխ., էջ 242:

նախդիրներով՝ դրանց հետ արտահայտելով որևէ ամբողջական հարաբերություն»⁶⁶ և այլն:

Հոլովների հետ սերտորեն կապվում և նրանց լուսաբանության համար որոշակի կարևորություն են ներկայացնում նաև Հոդերը, որոնք նույնպես քննության առնելով՝ լեզվաբանները հիմնականում ճիշտ են որոշել այն դերը, որ խաղում են՝ ծրանք տարբեր լեզուների Հոլովական համակարգում: Ա.Ա.Ռեֆորմատսկին, օրինակ, նշելով, որ Հոդերը բոլոր լեզուներին էլ, որ հատուկ են, և, ընդհակառակն, գործածական են արաբերենում, ռոմանական և գերմանական լեզուներում, այն տեսակետն է հայտնել, որ «սպասարկու բառերի համար Հոդերը շատ էական են: Նրանք հարաբերություններ չեն արտահայտում նախադասության անդամների միջև, չեն կազմում շարահյուսական ձևեր, բայց հանդիսանում են նյութական իմաստ ունեցող բառերի առավել բնորոշ «քերականական ուղեկիցներ»⁶⁷: Անտեսելով հանդերձ, որ որոշ լեզուներում (ինչպես, օրինակ, հայերենում) Հոդերը նաև շարահյուսական ձևեր են կազմում և համապատասխան հարաբերություններ արտահայտում), պետք է ասել, որ նա միանգամայն իրավացիորեն դրանք ձևաբանական-քերականական լեզվական միավորներ է դիտել և ըստ այդմ էլ նաև այն տեսակետը հայտնել, որ «Հոդը կարող է իր վրա կրել նախադասությունների անդամների միջև եղած հարաբերությունների արտահայտման «բեռը», այսինքն Հոլովվել՝ ազատելով, որ քիչ է պատահում, գոյականներին այդ «պարտականությունից», ինչպես, օրինակ, գերմաներենում:

Եզակի թիվ ... հոգնակի թիվ
ար. սեռ. իգ. սեռ. չեզ. սեռ.
Ուղղ. der die das die
Սեռ. des der des der
Տր. dem der den den
Հայց. den die das die»⁶⁸:

Դրան անմիջապես ավելացնելով, թե «Հոդի այդպիսի հատկության շնորհիվ գոյականը Հոլովվելիս կարող է կորցնել Հոլովական ձևերը և մնալ անփոփոխ», Ա.Ռեֆորմատսկին կարևորում և ավելի ակներև է դարձնում այն դերը, որ կատարում է Հոդը Հոլովների համակարգում: Այդպիսի դերից, անշուշտ, գերծ չեն նաև հայերենի Հոդերը, որոնք, ինչպես հայտնի է, վերջադաս՝ Հոլովին կից են գործածվում, ի տարբերություն, ասենք, գերմաներենի, որտեղ նրանք ցույց տալով «գոյական անվան թիվը, սեռը և Հոլովը»⁶⁹, նախադաս և անջատ գործածությամբ ոչ թե համադրական, այլ վերլուծական Հոլովներ են կազմում, ինչպես, օրինակ՝ der Lehrer («ուսուցիչ») ուղղ., և dem Lehrer-տր.⁷⁰: Սրանք ևս լեզվական իրողություններ են, որոնք իրենց հերթին ցույց են տալիս, որ արտաքին աշխարհի բազմազան առարկաների, երևույթների, եղելությունների միջև եղած բազմազան կապերն ու հարաբերությունները արտահայտելու համար լեզուներում գործածվում են զանազան միջոցներ, որոնցից մեկն էլ՝ բնականաբար, Հոլովն է:

⁶⁶ Краткая русская грамматика, с. 161.

⁶⁷ А. А. Реформатский, *Նշվ. աշխ.*, էջ 286-297:

⁶⁸ Նույն տեղում, էջ 299:

⁶⁹ В. И. Кодухов, *Նշվ. աշխ.*, էջ 244:

⁷⁰ Большая советская энциклопедия, т. 19, с. 59.

Իբրև այդպիսին, ինչպես լեզվաբանական գիտությունն է հաստատում, Հոլովը «բազմանշանակ կամ բազմիմաստ լեզվական միավոր է»⁷¹, «կարող է ներկայացնել զանազան առնչություններ»⁷², միևնույն դադարվարը կարող է արտահայտվել տարբեր Հոլովներով, մի Հոլովը կարող է անգամ կատարել ուրիշ Հոլովների պաշտոնը, որ կոչվում է սինկրետիզմ⁷³ և այլն:

Պետք է ասել, որ այս և նման հարցերը նույնպես քննվել ու պատշաճ լուսաբանություն են գտել ինչպես մասնավոր, այնպես էլ ընդհանուր լեզվաբանական մի շարք աշխատություններում: Դրանցում առավելապես ավելի հանգամանորեն են ներկայացվել Հոլովների շարահյուսական գործառությունները և ճշտորեն նշվել, որ դրանք պայմանավորվում են նրանց արտահայտած հարաբերությունների բնույթով, որ յուրաքանչյուր Հոլով կիրառվում է մի շարք՝ մեկ հիմնական և մեկից ավելի՝ երկրորդական շարահյուսական պաշտոններով:

Համաձայնելով Ե.Կուրիլովիչի հետ՝ Ի.Գ.Միլոսլավսկին նույնպես գտնում է, որ «Հոլովները ունենում են հիմնական և երկրորդական գործառություններ: Այդ գործառությունները համապատասխանաբար որոշվում են համակարգով և համատեքստով: Այդպիսի հակադրությունը ավելի ցայտունորեն երևում է Հայցական Հոլովի բնույթի վերլուծության ժամանակ: Նրա առաջնային գործառությամբ ուղիղ խնդրի գործառությամբ է (человек знает, знает человек и այլն), երկրորդականը՝ մնացած բոլոր՝ ժամանակի, տեղի, չափի պարագաների (работает год, пойдут метр) գործառությունները»⁷⁴:

Լեզվաբանական-քերականական մի շարք աշխատություններում պատշաճ գիտական մակարդակով են լուսաբանվել նաև Հոլովների բազմազան ու բազմաբանակ իմաստները: Օ.Ս.Ախմանովան, օրինակ, ուղղականի՝ 10, Հայցականի՝ 15, սեռականի՝ 29, տրականի՝ 19, գործիականի՝ 20 տեսակ է նշել, որոնք իրենց հերթին նրանց ինքնությունն են հաստատում և բացահայտում Հոլովի քերականական կարգի էությունը, լեզվում ունեցած մեծ դերն ու նշանակությունը⁷⁵:

Եվ կամ արդեն հիշատակված «Русская грамматика» գրքում ևս ոչ միայն Հոլովը լեզվական-քերականական բազմիմաստ միավոր է համարվում, այլև, որ առավել կարևոր ու զննահատելի է, այն ճիշտ տեսակետն է Հայտնվում, որ «Յուրաքանչյուր Հոլով ունի իմաստների իր բուն համակարգը: Առանձին Հոլովների իմաստներ կարող են մոտ լինել (мозгут облучаться) կամ համընկնել, բայց տարբեր Հոլովների իմաստների համակարգերը երբեք չեն համընկնում»: Չկամենալով շատ հեռու գնալ և բավարարվելով այսքանով տեսնում ենք, որ լեզվաբանական գիտությունն իր զարգացման ճանապարհին մեծադույն նվաճումներ է ձեռք բերել Հոլովների պարզաբանման բնագավառում և նրանց վերաբերյալ ստեղծել է խորապես գիտական մի ուսմունք, որ ուղեցուցային արժեք ու կարևորություն է ներկայացնում ժամանակակից Հայոց լեզվի Հոլովների ու Հոլովական համակարգի լուսաբանության համար:

⁷¹ Краткая русская грамматика, с. 161.

⁷² Հր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 360:

⁷³ Նույն տեղում, էջ 371:

⁷⁴ И. Г. Милославский, նշվ. աշխ., էջ 82-83:

⁷⁵ С. М. О. С. Ахманова, նշվ. աշխ., էջ 172, 29, 19, 119-120, 20, 469-470.

⁷⁶ Русская грамматика, т. 1, с. 479.

ОБЩЕЛИНГВИСТИЧЕСКОЕ ПОНИМАНИЕ ПАДЕЖЕЙ**А. С. МАРКАРЯН****Р е з ю м е**

В процессе развития языкознания было создано ценное учение о падежах и падежных системах языков, по которому падеж характеризуется: а) как словоизменительная категория имени, "выражающаяся в системе противоположных друг другу рядов форм и обозначающая отношение имени к другому слову (словоформе) в составе словосочетания или предложения"; б) как языковая, грамматическая единица, представляющая собой сложное единство значения и формы выражения этого значения; в) как языковая многозначная единица, формы которой составляют определенные парадигмы.

С точки зрения подобных характеристик многие русские языковеды доказали, что: а) категории падежа свойственна омонимия, и омонимичными могут быть флексии разных падежей в разных парадигмах, б) падежные отношения в разных языках выражаются разными количествами падежей, а те языки, которые не имеют их, пользуются другими способами.

Общее языковедческое понимание падежей и созданное на этом основании учение представляет большую ценность и для правильного решения спорных вопросов падежей и падежной системы современного армянского языка.